ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-10/3-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 15.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Նարսան» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ս. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **12.12.2019թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-20-10/3-3** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 93,674,970 (իննսուներեք միլիոն վեց հարյուր յոթանասունչորս հազար ինը հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ.:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:**

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Նարսան» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | Ք. Երևան, Շահամիրյանների 7, 7/7, 7/8 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1570023178060100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00855039 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ | գլխավոր տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

AK 0674083

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/3-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Ընդհանուր քանակ | Մատակարարումը՝ 2020թ (ըստ համապատասխան եռամսյակների) | | | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 15.12.2020թ.-ը | | |
| 3. | ջրատար խողովակաշարեր մետաղական խողովակ d=48 մմ | մետր | 20730 | 20730 | | | 889 | 18,428,970 |
| 8. | պրոֆնաստիլ (պրոֆնաստիլ) | քմ | 8000 | 8000 | | | 2027 | 16,216,000 |
| 9. | պրոֆնաստիլ (պրոֆնաստիլ զինվորական նախշով) | քմ | 5000 | 5000 | | | 3295 | 16,475,000 |
| 10 | պրոֆնաստիլ (պրոֆնաստիլ) | քմ | 15000 | 15000 | | | 2837 | 42,555,000 |
| Ընդամենը | | | | | | | | 93,674,970 |

Ծանոթություն.
9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով գնումը կիրականացվի ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության տրված հայտերի հիման վրա, իսկ ապրանքների մատակարարումը կիրականացվի հայտերը ներկայացնելուց հետո՝ 20 օրացուցային օրվա ընթացքում:
Հայտերը ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության կողմից կներկայացվի ոչ ուշ քան 20.11.2020թ.:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Նարսան» ՍՊԸ գլխավոր տնօրեն |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ | |
| Ն. ՅՈՒԼՋՅԱՆ | Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

AKCC74023

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/3-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ. |
| 3. | ջրատար խողովակաշարեր մետաղականխողովակ d=48 մմ | 44161130/550 | 18,428,970 | 18,428,970 | 18,428,970 | 18,428,970 | 18,428,970 | 18,428,970 | 18,428,970 | 18,428,970 | 18,428,970 | 18,428,970 |
| 8. | պրոֆնաստիլ (պրոֆնաստիլ) | 44118400/507 | 16,216,000 | 16,216,000 | 16,216,000 | 16,216,000 | 16,216,000 | 16,216,000 | 16,216,000 | 16,216,000 | 16,216,000 | 16,216,000 |
| 9. | պրոֆնաստիլ (պրոֆնաստիլ զինվորական նախշով) | 44118400/508 | 16,475,000 | 16,475,000 | 16,475,000 | 16,475,000 | 16,475,000 | 16,475,000 | 16,475,000 | 16,475,000 | 16,475,000 | 16,475,000 |
| 10. | պրոֆնաստիլ (պրոֆնաստիլ) | 44118400/509 | 42,555,000 | 42,555,000 | 42,555,000 | 42,555,000 | 42,555,000 | 42,555,000 | 42,555,000 | 42,555,000 | 42,555,000 | 42,555,000 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | 93,674,970 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Նարսան» ՍՊԸ գլխավոր տնօրեն

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AK 06 74083